

ՔԱՐԱԶ ՄԱՀՈՒԱՆ ՎԵՐԱՅ *).

(Մտածմունք այն մասին թէ՛ մարդիկ որչափ քիչ են հոգս առնում մահուան յիշատակն իրանց մտքում անմոռաց պահելու համար ու թէ՛ մահն ի նչպէս է փաստով մեզ ցոյց տալի մեր առարգ լինելն ու ճանաչել տալի՝ մեզ մեր բնութեան արժանիքն ու յարգը:)

(Տէր, եկ և տես: Յովհ. ԺԱ, 34:)

Կը ներուի՞ ինձ արդեօք այսօր մի գերեզման բանալ թագաւորի Դրան մեծամեծների առաջ, ու նորանց քնքուշ աչքերը վերաւորուած չե՞ն լինիլ արդեօք, տեսնելով իրանց վերայ տխրութիւն բերող մի այդպիսի բան: Ես չեմ կարծում, Տեառք, որ քրիստոնեաները պիտի մերժեն ներկայ գտնուել այս տխուր հանդիսին Յիսուսի Քրիստոսի հետ: Նորան էին ասում, ինչպէս գրուած է սուրբ աւետարանի մէջ թէ՛ Տէր, եկ և տես՝ թէ՛ որտեղ են դրել Ղազարոսի մարմինը, և նա է որ հրամայումէ գերեզմանի վրայի քարը վեր առնել, և որ կարծես, մեզ ասումէ իւր կողմից թէ՛ եկէ՛ք ու ինքներդ տեսէ՛ք: Յիսուսը չէ մերժում տեսնել այս մեռած մարմինն, իբրեւ կարեկցութեան մի առարկայ և իբրեւ հրաշքի մի առարկայ. բայց մենք ենք, խեղճ՝ ողորմելի մահկանացուքս, որ չենք ուզում տեսնել այդ տխուր տեսարանն, ու ապա մեր չուղելովն՝ ասպնջուցանում ենք, որ մենք սխալվում ենք: Գնանք ու տեսնենք Յիսուսի Քրիստոսի հետ, ինչ որ չենք ուզում տեսնել. ու ճանաչենք մշտապէս մեր սխալն, որ անում ենք այն ամենայն երկրաւոր բարիքների կողմանէ, որ մահը մեր ձեռքիցն առնումէ:

Մարդուս մտքի մի օտարոտի թուլութիւն է չուղենալն, որ մահն երբ և իցէ՛ ներկայանայ իւր առաջը, թէ՛ և ամեն կողմից իւր աչքի առաջն է գալի՝ ու հաղարաւոր տարրեր կերպերով, Թաղման հանգէսի ժամանակը մարդս լսումէ միայն զարմանք ցոյց տուող խօսքեր թէ՛ ինչպէս եղաւ, որ այս մահկանացու մարդը մեռաւ: Ամեն մի մարդ միտքն է բերում թէ՛ դեռ քանի՞ օր ա-

(*) Այս քարոզը Լուդովիկոս ԺԴ - ի առաջ ասել է Մոյի եպիսկոպոս Բօսիւէ, որ ծնել է 1627 - ին և վախճանել է 1704 - ին:

աւջ էր, որ նորա հետ խօսում էր, և թէ հանգուցեալն ինչ
բանի վրայ էր իւր հետ խօսում, և ո՛վ կը կարծէր, որ նա այդ-
պէս շուտ մեռնի. ահա, ասումեն, ահա ինչ է մարդս. և այս
ասողն ինքն էլ մարդ է. և այդ մարդու ամենեւին փոյթը չէ, ու
մոռանում է՝ թէ ինչ է իւր վիճակն էլ. և եթէ իւր մտքումն
անց է կենում որ և իցէ բոպէական ցանկութիւն, որ պարաս-
տուի այդ իւր ասպագայ վիճակին համար, իսկոյն հեռացնումէ իւր
գլխիցն այդպիսի սիրտ սեւացնող մտածմունքներն. և կարող եմ
ասել, թէ մահկանացու մարդիկը՝ մեռելներին թաղելուց պակաս
չեն հոգս տանում՝ մահուան վերայ իւրեանց ունեցած մտած-
մունքն էլ թաղելու: Բայց, կարելի է, որ այս մտածմունքներն
աւելի ներգործութիւն ունենան մեր սրտի վերայ, երբ որ այդ
մտածմունքն անենք Յիսուսի Քրիստոսի հետ Ղազարոսի գերեզ-
մանի վերայ. բայց խնդրենք մեր Փրկչին, որ տալաւորի մեր մտքի
մէջ այդ մտածմունքն իւր սուրբ Հոգւոյ շնորհօքն, և ջանաւք ու
փոյթ ունենանք արժանանալու այդ շնորհացը՝ բարեխօսութեամբ
սուրբ Աստուածածնի:

Մարդկային մտքի հակումների ու կրքերի մէջ ամենից սաս-
տիկն է՝ բան իմանալու ցանկութիւնն. բան իմանալու, բան հաս-
կանալու այդ հետաքրքրութիւնն է, որ մարդս իւր բոլոր ոյժը
գործ է ածում, գտնելու՝ կամ բնութեան կարգի մէջ մի գաղտ-
նիք, որ չէ լսուած, չէ իմացուած, կամ արուեստի գործերի մէջ
մի ճարտարութիւն, որ նոր բան է, կամ կարգէ դուրս մի վար-
դապետութիւն ցոյց տալու աշխարհիս բաների, կամ մարդոց
կառավարութեան մէջ: Բայց մեր այդ չափից դուրս ցանկութեան
մէջ, որ հարստացնենք մեր հասկացողութիւնը, նոր նոր բաներ
իմանալով, նոյն բանին ենք հանդիպում, որպէս և նոքա, որոնք
որ, աւելի հեռուն քցելով իրանց աչքը, չեն նկատում իրանց չորս
կողմն եղած առարկաներն, ուղում եմ ասել, որ մեր հոգին, մեր
միտքը ձգտելով մեծ ջանքերով՝ մեզանից շատ հեռու գտնուած
բաներն իմանալ, շրջելով, այսպէս ասեմ, երկինք ու երկիրս, բայց
և այնպէս այնքան թեթեւ կերպով է անցկենում իրան ամենից
մօտիկ գտնուած բաների վրայով, որ մենք մաշում ենք մեր բոլոր
կեանքը, միշտ մնալով ոչ միայն տգէտ ու անտեղեակ այն բանին,
ինչ որ մեր քթի տակն է, այլ և մինչև անգամ հէնց մեզ վրայ
էլ չենք կարողանում տեղեկութիւն ունենալ թէ՛ մենք ինչ ենք:

Ոչ մի բան այնչափ շատ կարեւոր չէ, որչափ որ էլի մեր գլուխը հաւաքելը բոլոր այս մտքերն, որ ուղիղ ճանապարհից ծովումեն ու դուրս գալի. և սորա համար է, ով քրիստոնեայք, որ ձեզ հրաւիրում եմ այսօր գնալ Փրկչի հետ մինչև Ղազարոսի գերեզմանն. «Եկ և տես» : Ով մահկանացու մարդիկ, եկէք տեսնելու մահկանացու բաների տեսարանն. ով մարդ, արի, սորվիր թէ՛ ինչ է մարդս : Կարելի է դուք կըզարմանաք, որ ասումեմ ձեզ թէ՛ դիմեցէ՛ք մահուանն, որ սորվիք թէ՛ ինչ է ք դուք ինքներդ, ու, կարելի է, դուք կը կարծէք թէ՛ լաւ չեմ անում, որ ձեզ ներկայացնում եմ մարդուն այնտեղ, ուր որ նա չիտայ : Եւ եթէ որ նեղութիւն քաշէք կամենալ, հասկանալ այն, ինչ որ ներկայանում է մեր աչքի առաջը գերեզմանի մէջ, դուք դիւրաւ կը համաձայնուիք ինձ հետ թէ՛ գերեզմանի մէջ մեր տեսածն ու իմացածն մարդկային բաների ամենահարազատ և ընտիր թարգմանն է ու շատ պարզ ցոյց տուող՝ ամենալաւ հայելին :

Բաղադրուած բանի բնութիւնը ամենից պարզ և որոշ կերպով ճանաչվում է այն ժամանակ, երբ որ նորա մասերը լուծվում, բաժանվում են իրարից : Արովհետեւ նոքա փոխադարձաբար խառնրվում են ու փոխվում, պէտք է նորանց բաժանել, որ լաւ իմանանք ու լաւ հասկանանք թէ՛ ինչ մասերից են բաղկացած : Եւ յիշատի՝ հոգւոյ ու մարմնոյ ընկերակցութիւնն է, որ մարմինը մեզ կրեւում է մի աւելի բան, ինչ որ չէ, իսկ հոգին նորանից պակաս մի բան : Բայց երբ որ բաժանվում են իրարից ու մարմինը վերադառնում է գէպի հոգն, ու հոգին էլ կարողանում է վերադառնալ դէպի երկինքն, որ տեղից որ նա դուրս էր եկած, այն ժամանակ մենք տեսնում ենք՝ թէ՛ մարմինը և թէ՛ հոգին իրանց անխառն գրութեան, իրանց պարզութեան մէջ : Աւրեմն մենք պէտք է միայն նկատենք թէ՛ մահը մեզանից ինչ է խլում ու ինչ է ամբողջապէս թողնում. մեր գոյութեան որ մասն է նորա հարուածների տակն ընկնում ու որն է իրան պահպանում այդ աւերութեան մէջն. այն ժամանակ մենք հասկացած կը լինենք թէ՛ ինչ է մարդըն, այնպէս որ՝ ես չեմ վախենում հաւատացնելու թէ՛ մահուան գրկիցն ու նորա թանձր ստուերներիցն է, որ դուրս է գալի մի անմահ լոյս, որ մեր հոգին լուսաւորում է՝ մեր բնութեան պայծառութեանը վերաբերմամբ : Աւրեմն վազեցէ՛ք, ով մահկանացու մարդիկ, ու Ղազարոսի գերեզմանի մէջը տեսէք, թէ՛ ինչ է

մարդս. եկէ՛ք, տեսէ՛ք մի և նոյն բանի մէջ՝ ձեր մտադրութիւն-
ների վերջն՝ ու ձեր յոյսերի սկիզբն. եկէ՛ք տեսնելու միասին՝
թէ մեր գոյութեան լուծուելն ու թէ նորոգուիլը. եկէ՛ք տեսնե-
լու կեանքի յաղթանակը՝ մահուան յաղթութեան մէջ. է՛կ և ԿԵ՛ս:

Ո՛վ մահ, մենք շնորհակալ ենք քեզանից այն լուսի համար, որ
գու ծաւալումես մեր տգիտութեան վերայ: Դ՞ու ես միայն, որ
մեզ փաստերով ցոյց ես տալի մեր անարգ արարած լինելը, դ՞ու
ես միայն, որ ճանաչել ես տալի մեզ մեր արժանաւորութիւնն,
եթէ մարդս իւր անձը շատ է յարգում, գու գիտես ընկճել նորա
հպարտութիւնը. եթէ մարդս իւր անձը շատ է արհամարհում, գու
գիտես նորան սիրա տալ, որ իւր մտածմունքներն իսկական չափի
ու չափաւորութեան մէջ պահի. գու նորան սորվեցնումես այս
երկու ճշմարտութիւնն, որ նորա աչքերը բաց են անում՝ ինքն
իրան լաւ ճանաչելու, թէ նա անչափ արհամարհելի արարած է
այն կողմանէ, որ ժամանակի մէջ վերջանումէ, և անչափ յար-
գելի է այն կողմանէ, որ անց է կենում, գնում՝ դէպի յաւիտե-
նական կեանքն: Այս երկու կարեւոր մտածմունքը կը լինի այս
քարոզի նիւթը:

ԱՌԱՋԻՆ ԿԵՏԸ:

Մի համարձակ միտք է ասել մարդոց թէ՛ նոքա մեծ բան չեն:
Ամեն մի մարդ, նեղանումէ, երբ որ իրան կաշումեն երբ որ նորան
այնպիսի մի բան են ասում, որ իւր անձնասիրութեանը դիպ-
չումէ. նա աւելի սիրումէ աչքերը փակել, կուրանալ, քան թէ
ճանաչել իւր թուլութիւնն, իւր պակասութիւնները. մանաւանդ՝
շատ բազմաւորներն ուզումեն, որ իրանց հետ քնքուշ կերպով
վարուին. նորանց ախորժ չէ թվում, որ իրանց պակասութիւնները
նկատեն. նոքա ուզում են, որ, եթէ տեսնեն էլ, գոնէ ծածկեն
իրանց տեսածը. բայց շնորհակալութիւն մահիցն, որ կարող ենք
ազատ խօսել: Աշխարհիս վերայ ոչ մի մեծութիւն չկայ, որ աննշան
ու ստոր կողմեր չունենայ. ոչ մի մարդ չկայ, որ առանց դժուա-
րանալու չխոստովանի թէ՛ ինքն ոչինչ է, երբ որ իւր վերայ այդ
կողմից ենք մտիկ տալի: Բայց մի ունայն անձնասիրութիւն էլ ու-
նինք, որ չենք ուզում տեսնել ու ճանաչել մեր թոյլ կողմը, մեր
պակասութիւնները, այնպէս մեզ համարելով, որ մի մեծ բան
ենք: Կենդանի է ու լինի յաւիտենական Կա՛կն: Ո՛վ մարդ կային

մեծութիւն, մէկ կողմից՝ որ մտիկ եմ՝ տալի քո վերադ, որ դու մեծ քան ես արարածների կարգում այն կողմանէ, որ Աստուածանիցն ես և առ Աստուած պիտի վերադառնաս, որովհետեւ Նորան ես վերաբերվում, այդ կողմիցն տեսնում ես, որ քո մէջդ Աստուծոյ ճառագայթը կայ, որն որ խկապէս ինձ քեզ պատուել է տալի. բայց միւս կողմից տեսնելով, որ դու իսկ մարդկային էլ ես, ես քեզ տսումեմ մի անգամ էլ, այդ կողմիցն, որ քեզ վերայ մտիկ եմ տալի, քո մէջդ ոչինչ չեմ տեսնում, որ ա. ք. ք. ընկնէր. մի աննշան արարած ես դու. ինչու որ՝ ինչ կողմն էլ որ քեզ շուռ եմ տալի, միշտ գտնումեմ առաջս մահ, որ ամեն կողմից շատ ստուերներ է քցում այն բանի վրայ, ինչին որ աշխարհիս փառքը կուղէր շատ լաւ գոյն տալ ու գեղեցիկ երևեցնել. ու չեմ իմանում թէ՛ ինչ բանի վերայ պիտի հաստատեմ մարդկային մեծութեան այս վեհ անունն, ոչ էլ իմանումեմ, թէ ինչին տամ այդպիսի մի փառաւոր տիտղոսը:

Աւզենք, չուզենք, բայց համազուիք, ո՛վ քրիստոնեայք, ընդունելու այդ կարեւոր ճշմարտութիւնը մի անդիմադրելի, մի՛ անհերքելի մտածողութեամբ. Դիպուածը չէ կարող աւելի ազնիւ լինել, քան թէ իրողութիւնն, որ խիութիւն է, ոչ էլ երկրորդական բանը կարող է աւելի նշանակութիւն ունենալ, քան թէ գլխաւորն, ոչ էլ շինուածն աւելի հաստատուն լինել, քան թէ չիմրն, որոյ վերայ բարձրացած է շէնքը. ոչ էլ վերջապէս այն, ինչ որ կցած, կապած է մեր գոյութեան հետ, այսինքն է՝ մեր հոգւոյ, որ կապուած է մեր մարմնոյ հետ, կարող է աւելի մեծ ու աւելի կարեւոր քան համարուիլ, քան թէ մեր իսկ էութիւնը, մեր հոգին: Այժմ տեսնենք թէ, ինչ է մեր էութիւնը: Դորա վերայ լաւ մտածենք, քրիստոնեայք, թէ ինչ է մեր էութիւնը: Դու տաս՝, ո՛վ մահ, որովհետեւ, մարդիկն աւելի մեծամիտ լինելով, ինձ չեն հաւատալ: Բայց, ո՛վ մահ, թէեւ դու չես խօսում. բայց ինչ որ ասումես, ասումես մարդուս երեսին: Մի մեծ թագաւոր իւր ձայնն է փոխ տալի քեզ, որ քո ասածդ լսեցնես մարդոց ազանջներին ու նոցա սրտերի մէջը բերես, տալաւորես աւելի պարզ, աւելի հասկանալի ճշմարտութիւններ:

Ահա՛ այն գեղեցիկ մտածութիւնն, որ անուամէ թագաւոր Դաւիթ մարգարէն արքայական աթոռի վերայ նստած, իւր պալատականաց առաջը. Զերդ մեծութիւն, այդ մտածութիւնն արժա-

նի է ձեր ուշադրութեանը. նա ասում է. «Ես չեմ կրնա
 օրերս ու ի՞նչ ունեցած ոյժս ու շօրս լինի. Ես պիտի
 աւանդն. ո՞վ երկնաւոր թագաւոր, Գաւ միշտ կատար
 մնում ես յաւերսեան. Քո էութիւնդ միշտ անփոփոխ է, ոչ
 նուազում է, ոչ սպառում ու անց կենում, ոչ փոխւում և ոչ
 չափել կարելի է. քայց ահա իմ օրերս չափով ես դրել և իմ
 ոյժս, իմ շօրս, թիւնս Քո առաջդ՝ ոչինչ է. Այո՛, իմ
 գոյութիւնս ոչինչ է Քո առաջդ և ամենայն արարած,
 որ չափ ունի, որոյ օրերը չափուած, համարուած են,
 ոչինչ է. պատճառ որ՝ ինչ որ չափով է, իւր վերջն
 ունի. և երբ որ հասնում են այդ չափի վերջին,
 մի վերջին հարուած ոչնչացնում է բոլորը,
 որպէս թէ երբեք եղած չը լինէր. Եւ
 է հարիւր տարին, ինչ է հազար տարին,
 որովհետեւ մի վայրկեանը սրբում,
 ջնջում, անհետացնում է աշիւ արհիւ
 եւ ետից. Նաւայրէք ձեր օրերն,
 երկար ապրեցէք՝ եղբերուների նման,
 որ առակը կամ բնական պատմութիւնն
 ասում է. թէ ապրում են շատ հարիւրաւոր
 տարիներ. երկարացրէք ձեր կեանքն
 այն քան, որ քան երկար է այս
 կաղնիների կեանքն, որոց տակը
 մեր պապերը հանգստացել են
 և որոնք որ մեր ապագայ սերունդին
 էլ շուտ կանեն. ժամանակի այդ
 ընթացքի մէջն, որ մարդուս
 անչափ է երեւում, որչափ
 կուղէք, մեծացրէք, աւելացրէք
 պատիւներդ, աստիճաններդ,
 հաւաքեցէք, շատացրէք հարստութիւններ,
 ու քաշեցէք շատ վայելչութիւններ.
 Ի՞նչ օգուտ կը բերի ձեր՝ այդ
 աւելացրած, հաւաքած ու շատցրած
 ամեն քանը, քանի որ մահուան
 վերջին փշիւնը, որչափ էլ որ
 անդօր, որչափ էլ թոյլ լինի,
 յանկարծ կոչնչացնի այդ
 ունայն փառքն ու պերճութիւնն
 այնպիսի հեշտութեամբ,
 ինչպէս քանդվում են խաղի
 թղթերից շինած ամրացներն,
 որ երեխայոց մի ունայն
 խաղալիք են. և ի՞նչ շահ
 կը բերի քեզ այնքան
 գրուածքների ունենալն
 այս դրբիս մէջ ու բոլոր
 երեսները լցնելն
 գեղեցիկ գրերով, եթէ
 որ վերջապէս մի անգամ
 գիծ քաշելը գրածների
 վերայ, բոլորը պիտի ջնջի.
 Դեռ ևս գրածի վերայ
 քաշած գիծը հեռքեր կը
 թողնի. քայց վերջին
 բապէն մի գիծ քաշելով,
 կը ջնջի քո բոլոր
 կեանքդ, ինքն էլ կերթայ
 բոլոր մնացած քանի
 հետ ոչնչանալու չքութեան
 անդունդքի մէջն,
 ու երկբիս վրայ էլ չեն
 մնալ հեռքեր մեր
 կեանքի, մեր գոյութեանն,
 որ մի ժամանակ
 ունեցել ենք այս
 աշխարհիս վերայ.
 Սեր մարմինը կը փոխի
 իւր բնութիւնն և ուրիշ
 անուն կատանայ.

«մինչեւ անգամ՝ դիտելի տեսնեն երկար ժամանակ չի մնալ իւր
վերայ՝ նա կը գտնուայ՝ ասումէ Տէրտուգիանոս՝ չգիտեմ՝ ի նշախ-
տի մի բան՝ որ այլ եւս անուն չունի ոչ մի լեզուումը » . այսրան
ճշմարիտ է՝ որ ամեն բան մեռնումէ՝ մարդու մէջը՝ որ մինչեւ
անգամ՝ մեր սրտին տիրութիւնն բերող այս բաներն էլ՝ որով ո-
նուն էին տալի նորա այս թշուառ մտայնութիւնն՝ կորչումն էլ
էլ բանի տեղ չեն :

Աւրեմն ի՞նչ է իմ գոյութիւնս ու մեծդ Աստուած : Ես կեան-
քի մէջ եմ մտնում ու սկսում ասլել աշխարհիս վերայ՝ նորա
համար որ շուտով դուրս գամ նորա մէջից . ես աշխարհք եմ
գալիս՝ որ ինձ ցոյց տամ՝ ուրիշների նման՝ որ կամ այս կեան-
քումս ու յետոյ պէտք կը լինի՝ որ անյայտանամ աշխարհիս ե-
րեսից : Ամեն բան մեզ գէտի մահն է կանչում . բնութիւնը՝ կար-
ծես թէ՛ նախանձուելով այն բարիքի վերայ՝ որ մեզ արել է՝ շատ
անգամ մեզ յայտնումէ՝ կարծես պարզ ասումէ՝ որ նա չէ՛ կա-
րող մեզ թողնել երկար ժամանակ այն սակաւ նիւթն՝ որ մեզ
փախ է տալիս թէ՛ այդ նիւթը մի եւ նոյն մարդուն չի պիտի մնայ
այլ՝ ձեռքից ձեռք անցկենալու բանի պէս՝ միշտ պէտքէ ուրիշ բա-
նի փոխուի՝ միշտ ուրիշ բան պէտքէ գտնայ . թէ՛ այդ նիւթը նո-
րան պէտք է՝ ուրիշ ձեւակերպութիւնների՝ ուրիշ ձեւափոխու-
թիւնների համար . եւ թէ՛ յետ է՝ ուզում՝ ուրիշ բաներ անելու
համար՝ ուրիշ արդիւնք յառաջ բերելու համար :

Մարդկային ազգի այս՝ մշտապէս եւ յաջորդաբար ետեւ ետեւից
յառաջ գալն ու նորից անելն՝ ուղումեմ ասել՝ երեխայքն՝ որ
ծնվում են՝ իրանց մեծանալովն ու շատանալով՝ կարծես՝ ու-
սով մեզ հրում են ու ասում թէ՛ քաշուեցէք՝ գնացէք աշխար-
հիցս՝ այժմ՝ մեր հերթն է նորա վերայ ասլելու : Այսպէս՝ ինչ-
պէս որ մենք տեսնում ենք ուրիշներին՝ որ այս աշխարհքիցս
անց են կենում՝ գնում՝ հեռանում՝ ուրիշներն էլ կրտսնուն
մեր դուրս գալն՝ գնալն՝ ու իրանք էլ իրանց ապագայ սերունդին
նայնպէս տեղի պիտի տան : Այժմ Աստուած՝ մի անգամ էլ ասեմ՝
ի՞նչ ենք մենք : Երբ որ այժս քցում եմ ու մտիկ տալիս առաջս՝
ինչ ահագին տարածութիւն եմ տեսնում՝ որ ես դեռ չեմ անց
կացել . իսկ երբ որ աչքս ետեւ եմ քցում՝ ինչ սարսափելի մեծ
շարունակութիւն կայ՝ որոյ մէջը ես չեմ . ու տեսնում եմ թէ՛
ինչքան քիչ տեղ եմ քանում ժամա՛ռ ինչպէ՛ս ահագին անգունդքի

մէջ: Ես մի բան չեմ, ես ոչինչ եմ, այդպիսի մի փոքրիկ ժամանակաւի ջոցը չի կարող ինձ զանազանել ոչնչութիւնից. ես աշխարհք եմ եկել մարդոց թվումն ու համրանքի մէջ լինելու համար. կարծես թէ՛ յայտնի չէր, թէ ինչ պէտք էր լինէի ու կարծես թէ՛ առանց ինձ՝ այդ խաղը պակաս կխաղաղուէր, եթէ որ այդ թաւրոնի, այդ տեսարանի ետեւումն լինէի ես ու մէջ տեղ դուրս չգայի:

Այս Լա տեսեմ, եթէ որ ուզում ենք բաները քննել աւելի նուրբ կերպով, մեր բոլոր կեանքի ընթացքը չէ, որ մեզ զանազանումէ ոչնչութիւնից, ու դուք գիտէք, ո՛վ քրիստոնեայք, որ միշտ մի բնույթ է միայն, որ մեզ բաժանում է ոչնչութիւնից: Այժմ մենք այդ ոչնչութեան, մի վարկեանք ունինք ու այդ վարկեանն, որ անց կացաւ, էլ չկայ, նորա հետ մենք էլ ամենքս չէինք լինիլ, կանհետանայինք, եթէ որ իսկոյն՝ Լա առանց ժամանակ կորցնելու՝ նայնպիսի մի ուրիշ վարկեան նորա ետեւից մեր ձեռքը չընկնէր, մինչև որ վերջապէս մեր անցկացած վարկեաններից գոյացնէ վարկեանն, որին մենք հասնել չենք կարող, որչափ էլ որ աշխատենք հասնելու. Լա այն ժամանակ մենք կընկնենք իսկոյն, յետարան չունենալով: Ո՛վ գիւրաբեկ յենարան մեր կեանքի, ո՛վ խալխուլ, գիւրակործան հիմն մեր գոյութեան. պարհէրէ Դէջ է շրջում ճաշդ: Աւաղ, յիրաւի մարգս անց է կենում մի ստուերի նման՝ կամ իսկ մի պատկերի պէս բան է. Լա ինչպէս որ՝ իրան նման՝ ոչ մի կայուն, ոչ մի հաստատուն բան չկայ, ինքն էլ ընկնումէ միայն ունայն բաների ետեւից, բարւոյ՝ սրտկերի ետեւից՝ Լա ոչ թէ իսկական բարւոյ. ինքն էլ մարդու պարհէրէ Դէջ է շրջում, Բայց Լ է Ղ-ը է Ի-ով-ճ:

Ի՛նչ փոքրիկ տեղ ենք բռնում մենք այս աշխարհիս երեսին, յիրաւի այնչափ փոքր ու աննշան է մեր բռնած տեղն, որ ես երբեմն կաւկածում եմ Աստուծոյ հետը՝ քնած եմ արդեօք, թէ զարթուն: Զգիտեմ թէ՛ այն, ինչ որ ես զարթուն լինել եմ առում, գուցէ խոր քնոյ մի քիչ աւելի շարժող աւ սթափեցնող մի մասն է, Լա արդեօք ես իրական բաներ եմ տեսնում, թէ՛ միայն չ'ըրգովաւած եմ երեւակայութիւններով Լա սնոսի ցնորքներով:

Անց է կենում այս աշխարհիս լայն-լա-նի-նն. այն, անց է կենում այս աշխարհիս վայելչութիւնն ու իմ գոյութիւնս ոչինչ է Աստուծոյ սառը. այն, ի՞նչ Գոյ-նի-նն իբր ի՞նչ պիշ է Ք. առաջը:

Ես այնպէս սրբնթաց եմ տարւում, որ ինձ թվումէ թէ՛ ամենայն բան ինձանից փախչումէ ու հեռանում: Յիրաւի ամեն բան փախչում, հեռանումէ, տեսրք իմ. և այժմ, որ մենք այստեղ հաւաքուած ենք ու կարծում ենք, թէ անշարժ ենք, ամեն մէկ մարդ իւր ճանապարհն է առաջ տանում, ամեն մէկ մարդ հեռանումէ, առանց ինքն իմանալու, կամ մտածելու, իւր ամենամօտիկ հարեւանի վերայ. ինչու որ ամեն մի մարդ անզգալի կերպով գնում է դէպի վերջին բաժանումն. ահա լա՛ւով էս շէնքն է՞ օրերն:

Թարգմ. Գաղղէէէնէն Գրիգոր Եպիսկոպոս Աղափրեան,
(ԿԸԸ-Դ-Ն-Ի-Ի) .

ԱԹՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

(Ծ-Դ-Ն-Ի. ԱԴ-Դ-Դ, 1886 Բ. ԺԲ).

Ի.

ԱԹՈՒ ՀԱՅՈՑ ԵՒ ԱԹՈՒ ՊԵՍԱՐԻՈՑ.

Հայոց աթոռոյն վրայ իշխանութիւն աւնենալ ենթադրուած աթոռներէն առաջինն է Կեսարիոյ աթոռը, անոր համար մեք ալ անկէ կսկսենք քննութեան առնուլ մեր հակառակորդաց ենթադրական կարծիքները: Իսկ պաշտպանութիւն այս կարծեաց կը դրուցուի թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ և նորա չորս կամ հինգ յաջորդք Կեսարիոյ Եքսարքոսներէն ընդունեցան ձեռնադրութիւնը: Ճշգեմք ուրեմն այդ պարագային իմաստը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ պարզ աշխարհական հաւատացեալ մըն էր, ինքն սնած և կրթուած էր Կեսարիոյ մէջ, և բնակութիւն հաստատած և ամուսնացած էր նոյն քաղաքին մէջ, որ էր Հայաստանի մերձաւորագոյն արքեպիսկոպոսանիստ քաղաքը: Շատ բնական էր ուրեմն որ Հայոց Ժողովուրդէն ընտրեալ առաջին Եպիսկոպոսը՝ քահանայական և եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու համար զիմէր ի Կեսարիա. Անգամ մը այդ դէպքը ճշմարտուելէն յետոյ, անոր կրկնումը կը գիւրանայր, մտնաւածդ եթէ յիշեմք որ յիշեալ առաջին հինգ յաջորդները իւր որդիներն ու թոռներն էին, և առաջին երկուք Արիստակէս և Վրթանէս ոչ միայն իւր որդիք էին, այլ և ի Կեսարիա ծնած էին: Հայրենական յիշատակը և իրենց հայրը ձեռնադրող աթոռոյն յաբգանքը կրնային յարգուել գիրենք իրենց հօր օրինակին հետեւել: